ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/215

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Բեստկոդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Տ. Մելքումյանի (լիազորագիր՝ տրված 02.06.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9983-2022 գրությամբ «Բեստկոդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 26.05.2022թ. թիվ 31 գրության հիման վրա, 31.05.2022թ. թիվ 26/26-1/9983-2022 գրությամբ նախաձեռնել է «Բեստկոդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բեստկոդ» ՍՊԸ-ն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի ապրիլի 8-ին տեղի է ունեցել Երևան քաղաքի պատմության թանգարան ՀՈԱԿ-ի կարիքների համար «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով մրցույթը: Մրցույթի հայտերի բացման պահին «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ում ունեցել է ժամանակավորապես դադարեցված կարգավիճակ և ներառված չի եղել ԱԱՀ հարկ վճարողների ցանկում:

1) Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով չկա որևէ նշում, որտեղ արգելվում է «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ» կարգավիճակ ունեցող ընկերությանը մասնակցել ՀՀ պետական գնումներին: Համաձայն ՀՀ օրենսդրության «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ» ընկերությունը իրավասություններով տարբերվում է «ԼՈՒԾԱՐՎԱԾ» կամ «ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ» ընկերություններից, քանի որ ունի «ԱՆՈՒՆ» և «ՀՎՀՀ», ««ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ», «ՏՆՕՐԵՆ» որոնց միջոցով էլ հանձնաժողովը ՀՀ Կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526 Ն որոշման 67-ր-կետով կարող է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու փաստը (ժամկետանց պարտավորությունների մասով):

Ավելացում ըստ ՀՀ Հարկային օրենսգրքի 53 հոդվածի 8 կետի 2 ենթակետի 2-րդ մասի գործունեության դադարեցման ժամանակահատվածում հարկ վճարողի կողմից գործունեությունը վերսկսելու և այդ մասին համապատասխան հայտարարություն չներկայացնելու դեպքում հարկ վճարողի գործունեությունը համարվում է վերսկսված՝ գործունեությունը փաստացի վերսկսելու օրվանից:

Այսինքն «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊԸ-ն լիովին իրավունք ուներ մասնակցելու գնման գործընթացին:

1) ՀՀ Կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526 Ն որոշման 32 կետի 2-րդ ենթակետի համաձայն հրավերով նախատեսվում է. «Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և չեն ներկայացվում, եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության

պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը»:

Այսինքն եթե մասնակիցը պատրասվում է աշխատանքի ավարտից հետո այդ ծառայության գծով ՀՀ պետական բյուջե վճաել Ավելացված Արժեքի Հարկ պետք է գնային առաջարկը ներկայացնի վերոգրյալ որոշման մեջ նախատեսված ձևով: Որն էլ «Բեստկոդ» ՍՊԸ-ն ներկայացրել է:

Հրավերում նշվում է «տվյալ գործարքի գծով» արտահայտությունը. Ինչը նշանակում է , որ անկախ նրանից, թե որ հարկման դաշտում է գտնվում ընկերությունը, մինչև աշխատանքի ավարտը, հաղթող մասնակիցը պարտավոր է տվյալ գործարքի գծով հարկային հաշիվ դուրս գրելու պահին ընդգրկված լինի ԱԱՀ վճարողների ցանկում, որն էլ «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊԸ-ն պատրաստվում և պարտավորվում էր կատարել (Հավելում առ այն, որ «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊԸ-Ն 11.04.2022-ից հանդիսանում է ԱԱՀ հարկ վճարող):

«Երևանի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊԸ-ի հայտի մերժումը և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու առաջարկի բավարարելը կլինի օրինական եթե «տվյալ գործարքի գծով» արտահայտության փոխարեն լիներ «եթե ընգրկված եք ԱԱՀ վճարողների ցանկում» արտահայտությունը:

«Բեստկոդ» ՍՊԸ-ն հրավերով նախատեսված ոչ մի պայման չի խախտել ԱԱՀ-ը ներառյալ գին առաջարկելով: Հրավերի Հավելված 2 ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ում ասվում է «Ուսումնասիրելով ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ԲԵՆՏԿՈԴ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշցալ ընդհանուր գներով» և առաջարկում է ԱԱՀ-ն ներառյալ գին: Այստեղ նույնպես չկա որևէ կետ, ըստ որի պետական գնումների մրցույթում հայտ ներկայացնող ընկերությունը գնային առաջարկ ներկայացնելիս պետք է մրցույթի պահին ընդգրկված լինի ԱԱՀ վճարողների ցանկում, որպեսզի գնային առաջարկ ներկայացնի ԱԱՀ-ով:

Վերջնական աշխատանքի համար վճարելու ժամանակ հաշիվ ապրանքագրում պարզ նշված լինում է ընկերության ԱԱՀ վճարող լինելու փաստը: Հակառակ դեպքում Պատվիրատուն չի վճարի (Պատվիրատուն պարտավոր է չվճարել կատարված ծառայության դիմաց:

Ելնելով վերոգրյալից «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊԸ-ն լիովին իրավունք ուներ մասնակցելու գնման գործընթացին

Հիմք ընդունելով նշվածը պնդում եմ ,որ բացակայում են հիմքեր Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար և ԽՆԴՐՈՒՄ ԵՄ «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը մերժել քանի որ ընկերությունը թույլ չի տվել որևէ Օրենքի կամ ՀՀ Կառավարության Որոշման խախտում:

Ընդհանրացնելով ամբողջը «Երևանի պատմության թանգարան» ՀՈԱԿ -ի կողմից ՀՀ Ֆինանսների նախարար Պրն. Խաչատրյանին ներկայացված գրության մեջ առաջարկում են «Բեստկոդ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում քանի որ «Բեստոդ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցել է ժամանակավորապես դադարեցված կարգավիճակով և որպես ԱԱՀ վճարող(սակայն այդ պահին ներառված չի եղել ԱԱՀ վճարողների ցուցակում)-Որը հանգեցրել է ՀՀ Գնումների մասին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերության («խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»):

1. ՀՀ Գնումների մասին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում պարզ շարադրված է թե ովքեր չեն կարող մասնակցել ընթացակարգին: Սակայն ժամանակավորապես դադարեցված կարգավիճակով ընկերության մասին ոչ մի նշում չկա: Քանի որ ժամանակավորապես դադարեցված ընկերությունը գոյություն ունեցող իրավաբանական անձ է, որը ունի իրավասություններ: Այսինքն «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊԸ-ն ոչ մի օրենք չի խախտել:

2. «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊԸ-ն ընթացակարգին չի մասնակցել և որպես ԱԱՀ վճարող Այլ առաջարկել է, որ հաղթող մասնակից ճանաչվելու դեպքում պատրաստ է տվյալ ծառայության գծով ՀՀ Պետական բյուջե վճարել ԱԱՀ: Որն էլ թույլ է տալիս ՀՀ Կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526 Ն որոշումը (Չնայած նրան, որ մերժման հիմքում դրված է հենց այս որոշումը, սակայն որոշման մեջ չկա նույնիսկ մեկ նշում առ այն, որ մասնակիցը գնային առաջարկը ԱԱՀ ներառյալ առաջարկելու պահին պետք է ներառված լինի ԱԱՀ վճարողների ցուցակում)»:

«Բեստկոդ» ՍՊԸ պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/215 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով մասնավորապես պնդել է ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Երևանի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.05.2022թ. թիվ 31 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԵՔԲԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Բեստկոդ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից):

Հայտը ներկայացնելու պահի դրությամբ Մասնակիցը ՀՀ ՊԵԿ-ում հաշվառված է եղել որպես գործունեությունը ժամանակավորապես դադարեցված: Մասնակիցն ընթացակարգին մասնակցել է որպես ԱԱՀ վճարող: Գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտը գնահատվել է բավարար: Ընթացակարգը բողոքարկվել է Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից: Վերջինս բողոքի պահանջ է ներկայացրել՝ պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին մերժել Մասնակցի ներկայացրած հայտը և չեղարկել Մասնակցի հետ պայմանագիր կաքելու որոշումը:

ԳԲՔԱ-ԼՕ-2022/71 ծածկագրով բողոքի ընթացում ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի կողմից բավարարվել է բողոքաբերի ներկայացրած բողոքը:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով՝ մերժել է Մասնակցի հայտը, չեղյալ է համարել Մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշումը, և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել Ջանիկ Սևոյան Ա/Ձ-ին:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերությամբ, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից Ձեզ են տրամադրվում Մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/215 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/215 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/215 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Բեստկոդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Բեստկոդ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3. Սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 06.05.2022թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/71 իրավապարտադիր որոշում, որի համաձայն՝ մասնավորապես պարտավորեցվել է «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած ԳԲՔԱ-ԼՕ-2022/71 որոշման հիման վրա մերժել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9983-2022 գրությունը, «Երևանի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի 26.05.2022թ. թիվ 31 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպես, «Երևանի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Բեստկոդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Բեստկոդ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 06.05.2022թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/71 իրավապարտադիր որոշում, որի համաձայն՝ մասնավորապես պարտավորեցվել է «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում, այն հիմնավորմամբ, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում որոշմամբ վկայակոչված իրավական նորմերի պահանջներին, քանի որ վերջինիս գնային առաջարկով տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշելով՝ գործել է ոչ իրավաչափ, մասնավորապես՝ «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել է 08.04.2022թ.-ին, իսկ մասնակիցը ընդգրկվել է ԱԱՀ վճարողների ցանկում 11.04.2022թ. սկսված:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած ԳԲՔԱ-ԼՕ-2022/71 որոշման հիման վրա մերժել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտը:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է</u>, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:***

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ կետի համաձայն՝ ***Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:***

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ ***Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն***

դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական կարգավորումների և փաստական հանգամանքների հիման վրա արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված իրավապարտադիր որոշմամբ պարտավորեցվել է «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում՝ «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը որոշմամբ վկայակոչված իրավական նորմերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով, որպիսի պայմաններում հարկ եմ համարում արձանագրել այն փաստը, որ տվյալ դեպքում գնային առաջարկում առկա անհամապատասխանությունն արձանագրված լինելու պայմաններում Ընկերության հայտը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, ենթակա էր մերժման, հետևաբար գտնում եմ, որ նշված հիմքով Ընկերության հայտի մերժման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Բեստկոդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9983-2022 գրությամբ «Բեստկոդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**